ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի 2019-20 ուստարվա գործունեության վերաբերյալ

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը յուրաքանչյուր ուստարի իր գործունեությունը պլանավորում և իրականացնում է մասնաճյուղի զարգացման ռազմավարական միջնաժամկետ պլանին համապատասխան: Ընթացիկ ուստարում բաժինն առաջնորդվել է մասնաճյուղի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրից բխող 2018-2020թթ. միջնաժամկետ պլանի դրույթներով և իր 2019-20 ուստարվա գործունեությունը կազմակերպել է հաստատված աշխատանքային պլանով:

Հաշվետու ուստարում աշխատանքային պլանը ներառել է 18 գործողություն: Դրանց հիմնական մասի շրջանակներում բաժինը իրականացրել է համապատասխան գործընթացներ, որոշ գործողությունների շուրջ կան բացթողումներ:

Մի շարք գործընթացներ կազմում են բաժնի գործունեության հիմնական բաղադրիչ մասը: Մասնավորապես, յուրաքանչյուր ուստարում բաժինը.

1. Իրականացնում է մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ-ի) վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, համալրում և վերլուծություն: Ընթացիկ ուստարվա սկզբին ստորաբաժանումներից հավաքագրել է համապատասխան ցուցանիշները, ըստ այդ ցուցանիշների մասնաճյուղի գործունեության վերլուծությունները և կազմել է 2014-19թթ. մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների զեկույցը:

2. Տրամադրում է խորհրդատվություն “Դասընթացների փաթեթներ”-ի մշակման վերաբերյալ (ՌԾ, գործ. 1.2.5): Ընթացիկ ուստարում ուղեցույցը վերանայվել է՝ հաշվի առնելով ամբիոններում փաթեթների ուսումնասիրությունների արդյունքում հավաքագրված խնդիրները: Համեմատաբար թեթևացվել են պահանջները, ներառվել են որակի ապահովման մեխանիզմներ: Այն ներկայացվել է ամբիոններ հաջորդ կիսամյակներում նոր դասընթացների փաթեթները կազմելուց կամ հները վերանայելուց կիրառելու համար:

3. Աշխատում է կրթական ծրագրերի ղեկավարների և ամբիոնների հետ, պարբերաբար աջակցում է կրթական ծրագրերի կազմման աշխատանքներում, ապահովում է նոր կրթական ծրագրերի առաջարկի հայտերի կազմման գործընթացը, մասնաճյուղի տնօրենի աջակցությամբ կազմակերպում է կրթական ծրագրերի արտաքին փորձաքննության հարցը, կազմակերպում է դրանց հաստատման գործընթացը: Հաշվետու ուստարում բաժնի աջակցությամբ կազմվել են մագիստրոսական երկու կրթական ծրագրերի՝ **«Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա»** և «Տնտեսական քաղաքականություն և իրավունք» առաջարկի հայտերը, բակալավրի երկու կրթական ծրագրեր՝ «Ռուսաց լեզու և գրականություն» և «Հոգեբանություն» անցել են արտաքին փորձաքննություն ԵՊՀ-ում, ընթացքի մեջ է 2020-24 կրթական ծրագրերի վերանայման և մշտադիտարկման գործընթացը (ՌԾ, գործ. 1.3.2) :

4. Տարբեր մեխանիզմներով կատարում է արտաքին և ներքին շահակիցների կրթական կարիքների ուսումնասիրություն, վեր է հանում խնդիրները, հավաքագրում է նրանց առաջարկները, կատարում դրանց վերլուծություն և ներկայացնում մասնաճյուղի ղեկավարությանը և համապատասխան ստորաբաժանումներին: Այս գործընթացներում

բաժնին աջակցում է դեռևս 2018թ.-ին ստեղծված ուսանողական աշխատանքային խումբը (ՌԾ, գործ. 1.3.1)։

5. Պարբերաբար առաջարկություններ է ներկայացնում մասնաճյուղի պաշտոնական կայքի արդյունավետության բարելավման, հարստացման, թափանցիկության ապահովման ուղղությամբ։ Մասնավորապես, կայքում ավելացվել են նոր բաժիններ ներքին և արտաքին շահակիցներին թափանցիկ և մատչելի տեղեկատվություն ապահովելու համար։ Դրանք են. «Ուսանող» բաժնում՝ **Կրթական ծրագրեր**, որում ներառված ցանկը պարունակում է տեղեկատվություն մասնաճյուղում իրականցվող կրթական ծրագրերի, նրանց ղեկավարների մասին և հղում համապատասխան կրթական ծրագրերի վրա, ներկայացված են բոլոր կրթական ծրագրերի վերջնարդյունքները, «Կրթության որակի կառավարում» բաժնում՝ Ուղեցույցներ, «ԵՊՀ ԻՄ կառուցվածք» բաժնում՝ Աշխատակազմ։ Արտաքին կապերի բաժնի հետ համատեղ վերախմբագրվել են բոլոր բաժինները, մշտապես թարմացվում է ամբողջ տեղեկատվությունը (ՌԾ, գործ. 3.1.3, 8.4.6, 9.1.3)։

Աշխատանքային պլանի շրջանակներում բաժինն իրականացրել է նաև հետևյալ աշխատանքները.

1.Մշակել է «էթիկայի կանոնագիրք», որում սահմանված են էթիկայի սկզբունքները, ակադեմիական ազնվություն և անազնվություն, ԵՊՀ ԻՄ ղեկավարների, վարչական և ակադեմիական աշխատակազմի և ուսանողների էթիկական վարքագծի կանոնները, կարգապահական տույժերը և նրանց տրման ընթացակարգը, էթիկայի հանձնաժողովի իրավասությունները և պարտականությունները։ Կանոնագիրքը քննարկվել է ստորաբաժանումներում, ապա առաջարկների հիման վրա և իրավաբանի կողմից այն վերախմբագրվել է, բերվել որոշակի տեսքի և հոկտեմբերին ներկայացվել տնօրենին (ՌԾ, գործ. 1.2.6, 8.4.1)։ Երկրում ստեղծված իրավիճակից կախված էթիկայի կանոնագիրքն ամբողջությամբ առայժմ ճի գործարկվում։

2. Նոյեմբերին բաժինը համակարգել է ԵՊՀ հավատարմագրման շրջանակներում մասնաճյուղի տվյալների պատրաստման և ԵՊՀ ՈԱԿ ուղարկելու գործընթացը։ Ըստ ԵՊՀ-ից ստացած ձևաչափերի կազմակերպվել է անհրաժեշտ տվյալների հավաքագրում։

3. Դեկտեմբերին բաժինն իրականացրել է մասնաճյուղի 2016-20թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 2018-19 ուստարվա կատարողականի վերլուծություն։ Ըստ բաժնի կողմից մշակված հատուկ ձևաչափի ստորաբաժանումներից հավաքագրվել են ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ վերլուծությունները, ապա կազմվել է համապատասխան զեկույցը։

4. Դեկտեմբերին բաժինը կազմակերպել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 25-ամյակին նվիրված «Ես վստահում եմ իմ բուհին» խորագրով աշխատաժող։ Այն մասնաճյուղի զարգացման ռազմավարական մի շարք խնդիրների շրջանակներում իրականացվող միջոցառում էր և նպատակ ուներ վերհանել մասնաճյուղի ուսանողների և դասախոսների կրթական խնդիրները, բացահայտել, կամ ուղղակի ներկայացնել ուսանողների և դասախոսների մոտիվացիային խանգարող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները և քննարկումների արդյունքում գտնել, որոնել կամ ուղղակի վեր հանել դրանց հաղթահարման ճանապարհները։ Բաժնին կից ուսանողական աշխատանքային խմբի

աջակցությամբ նախապես ուսանողների և դասախոսների շրջանում անց է կացվել նրանց մոտիվացիայի վերաբերյալ հարցում, որոնց արդյունքները ներկայացվել են աշխատաժողովի ժամանակ:

5. 2019 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին բաժնի ֆեյսբուքյան էջի միջոցով իրականացվել է մասնաճյուղի գործունեության վերաբերյալ հասարակության կարծիքի ուսումնասիրություն: Հարցմանը մասնակցել են Տավուշի մարզի (մեծամասամբ) և այլ մարզերի 32 համայնքների թվով 183 բնակիչներ: Հարցումը նպատակ ուներ պարզել մասնաճյուղի գործունեությունից տեղեկացվածության, Տավուշի մարզի սոցիալ-մշակութային և ուսումնագիտական կյանքում նրա ունեցած դերի և պահանջվածության վերաբերյալ հասարակության (ուսանողներ, շրջանավարտներ, ծնողներ, գործատուներ և այլն) կարծիքը: Հարցման մասնակիցների **91%**-ը ԵՊՀ ԻՄ-ի ունեցած դերը գնահատել է լավ, որից **60%**-ը գերազանց: Միջին գնահատականը կազմել է 4.5:

6. 2019 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին բաժինը կատարել է 2018-19 ուստարվա ավարտին ներքին շահակիցների՝ դասախոսների, ուսանողների և վարչական աշխատակազմի շրջանում առցանց անցկացրած «ԵՊՀ ԻՄ-ից բավարարվածության» հարցումների արդյունքների վերլուծություն: Ուսանողական հարցման շրջանակներում պարզվում է ուսանողների բավարարվածությունը մասնաճյուղի ռեսուրսներից, պրակտիկաների կազմակերպման և ուսանողների գնահատման գործընթացներից: Դասախոսական հարցման շրջանակներում պարզվում է դասախոսների բավարարվածությունը ռեսուրսներից, ուսանողների գնահատման գործընթացից և գիտական գործունեությունից: Բոլոր հարցումների արդյունքներն առանձին բաժիններով վերլուծվել են, դուրս են գրվել խնդիրները և առաջարկները: Արդյունքները տեղադրվել են մասնաճյուղի պաշտոնական կայքում և ուղարկվել են ստորաբաժանումներին:

6. 2020թ. հունվար-մարտ ամիսներին բաժինը համակարգել է մասնաճյուղի ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթացը: Աշխատել է բոլոր խմբերի հետ: Ինքնագնահատման զեկույցը կազմվել է և ներկայացվել տնօրենին (ՌԾ, գործ. 1.3.5):

7. «Երիտասարդ դասախոսների աջակցման և առաջավոր փորձի փոխանցման կենտրոնին» աջակցման շրջանակներում և դասախոսական կազմի մանկավարժական կարողությունները և հմտություններն արդիականացնելու ու զարգացնելու նպատակով բաժինը 2020թ. ապրիլին կազմել է «Ինչպե՞ս օգտագործել Google forms ձևաչափի հնարավորությունները առցանց քննությունների համար» մեթոդական ուղեցույցը և երկու տեսահոլովակ: Մայիսին կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ, որոնց նպատակն էր մասնաճյուղի դասախոսներին աջակցել առցանց քննությունների կազմակերպման գործում, ներկայացնել առցանց կրթության պայմաններում ուսանողների ձեռքբերումների ստուգման և քննությունների կազմակերպման ամենատարածված, մատչելի և կիրառելի էլեկտրոնային գործիքներից մեկը՝ **“Google forms”** ձևաչափը (ՌԾ, գործ. 1.2.1, 1.2.2, 1.2.3):

8. Իրավիճակից ելնելով բաժինն առաջին անգամ ուսանողության շրջանում իրականացրել է ուսումնասիրություն հեռավար կրթության տված հնարավորությունների և խնդիրների վերաբերյալ: Հարցումն անց է կացվել 2020թ. մայիսին, որին մասնակցել է մասնաճյուղի առկա ուսուցման 1-ից 3-րդ կուրսերի 361 ուսանողից 289-ը (80%): Հարցման

արդյունքները մշակվել են և կներկայացվեն համապատասխան ստորաբաժանումներին։ Պլանավորված է նմանատիպ հարցում իրականացնել նաև դասխոսական կազմի շրջանում։

9. Մասնաճյուղի ռազմավարական ծրագրի կարևոր գործողություններից է դասընթացների և կրթական ծրագրերի առցանց գնահատման համակարգերի ներդրումը (ՌԾ, գործ. 1.3.4)։ Այս խնդրի իրականացման շրջանակներում բաժինը դեռևս անցած ուստարում մշակել է դասընթացի գնահատման հարցաշար, որը քննարկվել և խմբագրվել է մասնաճյուղի դասախոսական կազմի հետ և փորձարկվել մի քանի դասընթացների համար։ Հաշվետու ուստարվա 2-րդ կիսամյակի դասընթացների գնահատման համար բաժինը մշակել է առցանց հարցում, որը հունիսի վերջին, քննաշրջանի ավարտից հետո կկիրառվի։ Իսկ կրթական ծրագրերի գնահատման առցանց համակարգի նախագիծ մշակվել է, բայց չի գործարկվել։

Պլանավորված հետևյալ գործողությունների շրջանակներում չեն իրականացվել, կամ իրականցվել են ոչ բավարար չափի ու արդյունավետության գործընթացներ։ Դրանք են.

1. Չեն մշակվել և չեն առաջարկվել արդյունահեն և ձևավորող (ֆորմատիվ) գնահատման նոր ձևեր՝ հիմնված ակնկալվող կրթական վերջնարդյունքների գնահատման վրա (ՌԾ, գործ. 1.2.3)։

2. Չի վերանայվել կրթական ծրագրերի մշտադիտարկման և պարբերական վերանայման կարգը, իսկ գործող կարգն ամբողջությամբ չի գործադրվում։ Կրթական ծրագրերը վերնայվում են յուրաքանչյուր ուստարվա ընթացքում համապատասխան աշխատանքային խմբերի կողմից, կազմվում են հաջորդ 4-ամյա կրթական ծրագրերը և մայիսին ներկայացվում հաստատման։

3. Չի մշակվել վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական տարակարգերի աշխատողների վերապատրաստման և ատեստավորման համակարգ (ՌԾ, գործ. 4.2.5)։

4. Անդրադարձ չի կատարվել ԵՊՀ ԻՄ-ում ներքին աուդիտի համակարգին և նրա իրականացմանը (ՌԾ, գործ. 8.3.4)։

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին